

տեսնենք երեւոյթներ՝ որոնք անմեկնելի մնացած են. թագաւորութիւնք՝ որ կը բուսնին ու կը խամրին զրեթէ աննշան գոյութեամբ մը. եւ ժողովուրդ մը, որ անդադար նշաւակ խուժադուժ կամ հզօրագոյն ցեղերու ասպատակութեանց ու կեղեքմանց, զրեթէ կրել միայն գիտէ, եւ ազգերու ցուցակին մէջ հազիւ նշմարելի կը մնայ: Հայաստանի աշխարհագրական աննպաստ դրից կը վերագրեն ոմանք այս վիճակը. ուրիշներ՝ Հայոց ընդաբոյս անմիաբանութեան: Բայց այսպիսի պատճառներ¹ չեն գոհացներ հարցասէրը, որ անդին աշխարհաց սանձը կը տեսնէ մի միայն քաղաքի մը ձեռքը, ինչպէս Հոռոմն էր կամ Վենետիկ. եւ տրուած բարոյական պատճառաց մէջ աւելի արգասիք կը նշմարէ քան բուն պատճառ: Մեր քաղաքական տկարութեան արմատն աւելի խոր որոնելի է, նախնեաց առտնին բարոյականութեան մէջ իսկ: Հետեւաբար կարեւորագոյն դաս մ'է զոր պիտի հանենք հոս մեր ներկայ ուսումնասիրութենէն:

1. — Ազատաց դատարկութիւնը: — Մեր դիմաց ունինք ազնուականութիւն մը, որ անգործ՝ ուրախ ու շռայլ կեանք մը կը

1. Հմմտ. Ինճ. Բ, 369-418: